



ԲԱԶՄԱՎԷՊ

ՌՅԻԱ. 1872 — ԵՐԵՄՆԵՐՈՐԻ ՏԱՐԻ. — ՆՈՅԵՄԲԵՐ

ՇՆՈՐՀԱԼԻ ԵՒ ՊԱՐԱԳԱՅ ԻՒՐ

(Տես երես 289):

ԺԱ.

Հայոց և Ասորաց ընդդիմարանորին կրօնական. — Թուշր Շնորհալոյ աս մայրեալ համագրիս 'ի մէջ Ասորաց:

Քիչ մ'առաջ յիշեցինք այս ժամանակիս քաղաքական վիճակը, և Հայոց կաթողիկոսաց և նոր ընծայ Ռուբինեան պայազատաց բռնած տեղւոյն շրջակայ ազգերը և տերութիւնները. ինչպէս որ անոնք մեր ազգին քաղաքական կենաց վրայ մեծ ազդեցութիւն ունէին, նոյնպէս՝ եթէ և ոչ նոյնչափ՝ ազդեցութիւն ունեցան և այն շրջաբնակ քրիստոնէայ ազգաց վարդապետութիւնք. յորոց գլխաւոր երկուքն են Յոյնք և Լատինք, որոց հետ շատնշանաւոր յարաբերութիւնք եղան Գրիգորիսի և Ներսիսի ատեն, ինչպէս՝ ի կարգին պիտի տեսնենք: Կար երրորդ ազգ մ'ալ, որոյ հետ ալ քիչ շատ յարաբերութիւն ունեցան մերայինք այս Պահրաւունի հայրապետաց և Լեոնեան ու Հեթման թագաւորաց ատեն: Ասորի հին քրիստոնէայ ազգն՝ թերևս յառաջ քան զմերայինս եկեր բռներ և կը բնակէր այս կողմերս, ուր մեր պատմութեան տեղն է. և աւելի իրենց բնական էր երկիրն քան մերոց. որով կրնայ ըսուիլ թէ Հայք եկան մըտան ընդ մէջ Յունաց և Ասորւոց, իսկ Լատինք ընդ մէջ այս ամենեցուն: Մեր կաթողիկոսական աթոռն որքան որ Գետազարձի առջի նստած տեղէն հեռանալով՝ դէպ 'ի հարաւ և յՆփրատ մօ-

տեցաւ, այնքան ալ գրակցեցաւ Ասորւոց: Ասոնց հետ մերայոց ունեցած քրիստոնէական յարաբերութիւնն խիստ հին էր, և գրեթէ նոյն իսկ քրիստոնէութեան սկիզբը կ'եղնէր. որովհետև երկու ազգքս ալ զնոյն մէկ անձն թագէտս՝ իրենց առաջին առաքեալ կը ճանաչեն, և զԱբգար՝ թագաւոր: Քրիստոնէութիւնն երկու բնական ճամբով մտած է 'ի Հայս, մէկ մը՝ 'ի Փ. Ասիոյ՝ յունական աւանդութեամբ, մէկ մ'ալ՝ 'ի Միջագետաց կամ յԵգեպիոյ՝ ասորի աւանդութեամբ. և թերևս սա աւելի հնագոյն և զօրագոյնն էր, ինչպէս կը հաւատան մեզ Լուսաւորչի ատեն եղածն, և մինչև Ս. Թարգմանչաց օրերը՝ ասորի դպրութեան տիրելն յեկեղեցիս Հայոց, որ Տարօնոյ և Աղձնեաց կողմերը, աւելի երկար ատեն ալ տեկց, վասն սահմանակցութեան երկիրն: Սակայն որչափ ալ մերձաւորութիւն և բնական իմն հարկ կար Հայոց՝ Ասորւոց հետեղ կամ միաբան ըլլալու, և եղած ալ են բաւականապէս, սակայն գրեթէ միշտ ալ Հայք մեծ սիրելութիւն մը չեն ունեցած այս ազգին հետ. յետ որոյ ճանչցան Յունաց նրբութիւնը և Հռոմայեցւոց առաւելութիւնը՝ աւելի ասոնց հանձարը սիրեցին և յա-

րուեցան, իսկ Ասորւոյն իբր հարկաւ հետեւին իրենց եկեղեցական կարգաց մէջ, քանի որ սուրբ գիրք չէին թարգմանուած հայերէն. իսկ երբ ասոնք թարգմանեցան և աշակերտք Ս. Մեորովբայ և Սահակայ սկսան յաճախել յԱղեքսան. գրիա և 'ի Կ. Պօղիս, ինչպէս Գ դարուն մէջ ալ ուսումնասէրք մեր յԱթէնս, Ասորիք երեսէ ընկան. և անշուշտ ալ աւելի պիտի ըլլար այսպէս, եթէ նոյն ատեն Հայոց տերութիւնն չվերցուէր՝ Յունաց ցրտութեամբը, և Քաղկեդոնի ժողովոյն պատճառաւ խոր խտրոց մը չբացուէր ընդ մէջ Յունաց և Հայոց. որք յայսմ՝ իրենց ըմբռման աւելի համաձայն գտնելով զԱսորիս՝ ասոնց հետ պահեցին միաբանութիւն կամ բարեկամութիւն մը. և երկուց ազգաց Կաթողիկոսունք՝ ըստ սովորութեան առաջին հայրապետաց զխաւոր աթոռոց եկեղեցւոյ՝ իրարու շնորհաւորութիւն կը գրէին, երբ աթոռոյն կը յաջորդէին: Մեր պատմութեան ժամանակին սկիզբները՝ Հայոց և Ասորոց ինչ աստիճան բարեկամութիւն ունենալն յայտ չէ. թուի ալ թէ շատ տաքութիւն չկար. զի այս օտար ազգաց այսպէս բռնի և հարկաւ իրարու սահմանայ մերձաւորութիւնն, յորմէ և եկեղեցական իրաւանց ալ շփումն կը պատճառէր, շատ հաճելի չէր իրենց. մանաւանդ որ եթէ ըստ վարդապետութեան հաւատոց համաձայնք կամ մերձայնք, ըստ ծիսից՝ ոչ սակաւ կը տարբերէին, և ռամիկք կամ ռամկամիտք աւելի արտաքին ծիսից նայելով, գատելով և չհաւնելով հակառակութիւն և ատելութիւն կ'առթէին. ինչպէս որ ամեն ատեն եղած է և կ'ըլլայ:

Հիմայ այս մերձաւորութեան ատեն՝ զիստուած մը կը յիշեն. Ասորի պատմիչք, որով կ'իմանամք թէ ինչպէս Յունաց հետ՝ ասոնց հետ ալ ընդգիմութիւն կամ տհաճութիւն կայ եղեր փոխադարձաբար. բայց շատ անընդունելի և յայտնի հակասաբանութեամբ կ'աւանդէ Ասորի պատմիչն, թէ Գրիգոր մ'ընելու ինքնին հեղինակ ըլլայ ընդգիմութեան կամ վիճաբանական գրուածոյ մը, յորում կը պատարակէր զԱսորիս՝ իրենց քանի մը եկեղեցական ծիսից համար, և մասնաւորապէս մէկ մասով խաչակնքելուն համար: Ասոր գէմ Յովհաննէս Բար-Անդրէաս (Որդի Անդրէի) անուամբ Ասորի վանահայրն որ Հռոմիլայի մօտ Փարսման աւանէն էր հայերէնօք, և հայերէն ալ լաւ գիտէր, մեր լեզուաւ բան մը շարագրեց 'ի պարսաւքանի մը ծիսից Հայոց, և 'ի մասնաւորի անջրախառն պատարագներուն համար. և Փոտական ճարտարութեամբ՝ գրուածքը տարաւ մոտոց նոր հաստատուած և հռչակուած Գրազարկ վանքի (Կիւլլիկոյ) գրոց մէջ, ուսկից յերևան գալով մեծ շփութեան պատճառ եղաւ, և շատ հակառակութեանց և կռուոց Ասորոց և Հայոց: Այն երկու կայծոտ գրուածներն ուրիշ կայծերու ալ պատճառ եղան. և թերևս մեծ կրակ մը պիտի ծագեր և շատ հոգի հրդեհէր, եթէ մեր արթուն և խոհեմ հովուապետն Գրիգորիս՝ արևութեամբ և մեծողութեամբ զեղեցիկ ճար մը չի գտնէր. նիւթական կրակով մը հրապարակաւ այրելով այն երկու գրուածներն ալ, զհայն և զասորին, և հոգեմաշ կրակը մարելով՝ երկու եկեղեցեաց և ազգաց մէջ բարեկամութիւնը հաս-

տատեց, երկուքէն ալ գովութիւն ժառանգելով: Ասկէ կ'երևի որ ինքն չէր հեղինակ այնպիսի գրուածոյ. իսկ եթէ իր մէկ գրուածն ալ առանց իր գիտման, կամ անզգուշութեամբ՝ այսպիսի բանի պատճառ եղած էր, և ինքն այս կերպով վերուց զպատճառը, շատ զարմանալի և գերագոյն առաքինական գործ մ'ըրած է, նման սքանչելի Ֆենելոնի ըրածին, իր թերուղի գրուածք գատապարտելով: — Այս գեպքն եղած է յամի իբր 1134¹, կամ քիչ վերջը:

Ուրիշ և աւելի խառնակ կրօնական շփութեան թիւն մ'ալ կար այս ատեններս, թէ Հայոց և Ասորոց իրարու հակառակութեամբ, և թէ նոյն իսկ Հայոց իրենց մէջ, թանձր ագիտութեան և առաջ եկած, այն ասորական երկիրներու մէջ, որք ինչուան հիմայ իսկ գրեթէ անծանօթ մնացած են. և թերևս շատ յարմարապէս Շնորհալին « Խառնափնդորեալ գաւառք », կ'անուանէ, որք կոչէին Ամայք և Շողթան. և թուի թէ Եգեսիոյ սահմաններէն հեռու չեն, ուր տարագրած Հայք՝ իրենց կեցրոնէն և վարդապետներէն հեռու մնացեալ, գուցէ և եպիսկոպոս ալ չունենալով, աւելի կամ պակաս տգէտ քահանայից և անոնց նման Ասորոց մէջ կ'ապրէին. և ոչ միայն ծիսից վրայ կը վիճէին, Հայք՝ Ասորոց ձիթով և աղով յընար չինելը, Ասորիք՝ Հայոց Մատաղը, պախարակելով, այլ նոյն իսկ Հայոց երիցունք՝ հաւատոց ամենէն զխաւոր նիւթոց վրայ տարակոյս և հակառակութիւն ունէին. ինչպէս է, Քրիստոսի չարչարանաց և մահուան կերպն, թէ Աստուած և մարդ ըլլալով արգեօք ինչ բնութեամբ մեռաւ. և որովհետև շատերն բնութեանց միաւորութեան և միութեան ինչիբը չէին լաւ իմանար, ոմանք մի բնութի ըսելով՝ կարծէին որ չի կըրնար ըսուիլ Աստուած խաչեալ և մեռեալ. ոմանք ալ ընդհակառակն՝ աստուածութեամբ խաչեալ և մեռեալ ըսել հարկ սեպէին. և երկուքն ալ մեծամեծ մտորութեանց և հերետիկոսաց ազանդոց մէջ կ'ինկնային. և կրակը փայտով առնցընելու պէս՝ վիճաբանութեամբ և հակառակութեամբ ալ աւելի կը զայրացրնէին շփութեանը և գայթակղութիւնը: — Այն կողմերը բարեպաշտ և խոհեմ Հայ իշխան մը կար Ասիւծ անուամբ, որ կը նըստէր Թլուրան աւանին մէջ, (զոր ոմանք յաշխարհ հոգի վարդապետաց մերոց կարծէն զԱւսիգն, հայրենիք Յովբայ նահապետի). ասոնց մնասակար վէճը գաղտնիցընելու համար՝ մարդ և գիր խաւրեց առ Կաթողիկոս մեր, որ ճար ընէ. նոյնպէս քահանայից ալ ոմանք գրեցին: Գրիգորիս յանձնեց իր եղբոր գրել այն քահանայից, վարդապետութեամբ, խրատով և յանդիմանութիւն: Ներսէս ալ իր շնորհքն եղբոր իշխանական ոգւոյն խառնած, գրեց երկայն թուղթ մը, որոյ խորագիրն է. « Թուղթ Տեառն Գրիգորիսի կաթողիկոսի Հայոց, գրեալ եղբոր նորին Ներսէսի և « պիսկոպոսի, հրօմանաւ նորին, 'ի Միջագետս

¹ Լը—Գիէն անուանի գիտնականն Արևելք Քրիստոսեայ անուանեալ գրոցը մէջ (Oriens Christianus. Ա. 1401). սխալմամբ Գրիգորի Տղայոյ ատեն եղած կը դնէ այս գիպուածը, մինչդեռ Աստուանի ոչ միայն մեր վերոյեղեալ ժամանակը կը նշանակէ, այլ և Բար-Անդրէի մահուան տարին ալ 1156, Մարտի կամ Յերապոլեայ եպիսկոպոս եղած ատեն:

« Ասորուց կոչեցեալ նահանգին . յազգաք որ անդ
 « մերոյ ազգի քահանայից հակառակորանելոյ »
 « առեւարար ընդ միմեանս , ոմանց ասել Աստուա .
 « ծուծեանն բնութիւն չարչարեալ և մեռեալ 'ի
 « խաչին ընդ մարմնոյն . և ոմանց զմարդն միայն .
 « և ոմանց զարձեալ ընդունելի լինել Մատաղ , և
 « յոմանց արհամարհելի . և այլք , եթէ գրախ .
 « որն իմանալի է և միայն օրինակաւ ասացեալ ,
 « այլ ոչ ճմարիտ էուծիւն . և այլ որ յայսպի .
 « սեաց : Ի խնդրոյ ուրուսն աստուածասիրի Ա .
 « ռեւծ անուն իխանի 'ի Թլկուրանն աւանի » :
 Ասոնց ամենէն հարկաւոր բանը նախ կ'ըսէ Ենոր
 հալին . այսինքն թէ այսպիսի սրբազան և բարձր
 խնդրոց վրայ պէտք չէ վիճիլ , ճանչնալով իրենց
 սգիտութիւնը , մինչ գիտնոց անգամ շատ զգու-
 շուծիւն պէտք է . մանաւանդ երբ Ս . Հարց խօ-
 սից մէջ հակասութիւն մը տեսնեն . զորօրինակ ,
 երբ Քրիստոսի մի անձն ըլլալուն համար՝ աս-
 տուածային և մարդկային բնութեանց պատշաճ
 ներք՝ երբեմն Աստուծոյ անուամբ և երբեմն
 Քրիստոսի՝ անխտիր կը գրեն . ուսկից սգէտք ան .
 ընտրողաբար կըրնան չփոթել և խառնակել զաս-
 տուածութիւն ընդ մարդկութեան : Արժանա-
 պէս կը յանդիմանէ զանոնք՝ որ Քրիստոսի չար-
 չարանքը և մահը՝ աստուածային բնութեան կ'ըն-
 ծայէին . հին Ասորի սուրբ վարդապետի մը , Ջե-
 նովբայ՝ խօսքը մէջ բերելով , որ ըսած էր երբեմն
 Աեանք Բանին և մարմնոյն , և երբեմն Մահ Բանին
 և մարմնոյն . ուրեմն կ'ըսէին Բանն Աստուած
 մեռաւ , կամ թէ մահն՝ Բանին կ'ընծայուի :
 Ենորհալին կը մեկնէ Ս . Հարց խօսքը և միտքը ,
 թէ ինչպէս այս բանս կըրնար ըսուիլ , որովհետև
 Քրիստոս՝ Աստուած և մարդ՝ մի անձն էր . բայց
 երբ պահանջուի՝ թէ ինչ բնութեամբ մեռաւ
 Քրիստոս , հարկ է զանազանել և ըսել որ աս-
 տուածութեամբն անչարչար և անմահ էր , մարդ
 կութեամբն կրեց և մեռաւ . այլ վրան զի աստուա-
 ծութիւնն և մարդկութիւնն անբաժանելի միա-
 ցեալ էին յանձնորսա՝ կըրնայ ալ ըսուիլ թէ Աս-
 տուած մեռաւ . ինչպէս 'ի հակառակէն ալ աս-
 տուածային զօրութիւնքն կ'ընծայուին մարդկու-
 թեան Քրիստոսի . զորօրինակ , հրաշագործելն ,
 և ըսելն թէ Ես և հայր իմ մի եմք , և այլն : Ս .
 Քրիստոսի Աստուածաբանի և Ս . Աթանասի վկա-
 յութեամբք կը հաստատէ Ենորհալին իր պարզա-
 բանութիւնը . այլ իր կողմէն ամենագեղեցիկ խը-
 րատ մը կ'աւելցընէ անոնց և մեզի և ամենուն հա-
 մար , որ այսպիսի խնդրոց զոր եկեղեցին ընդունած
 է՝ աւելի հաւատք ընծայենք՝ քան քննութիւն .
 « Որում ոչ հասեր մասցդ քննութեամբ՝ հաս .
 « ցես վաղվազակի հաւատոցք քաջութեամբն » :
 Իսկ եթէ գեռ մեկն անհաւան գառուի և հակառա-
 կաբանէ սակէ վերջը , զայնպիսին մերժել և հալա-
 ծել կը պատուիրէ , իբրև խառվիչ և գայթակղիչ
 ժողովրդեան :

Իարձեալ կը յանդիմանէ և կը հերքէ զանոնք՝
 որք երկրորդ անգամ թուղթ մը գրելով երկբայեր
 էին , թանձր մոլորութեամբ , Քրիստոսի մարմնոյն
 վրայք , թէ յերկնից բերուած ըլլայ , որովհետև
 հին օրինաց ատեն ալ Աստուած մարդակերպ
 կ'երևէր : — Ուրեմն հրեշտակներն ալ այնպէս
 երևնալուն համար՝ մարմնաւոր պիտի ըլլան , կը
 հարցանէ Ենորհալին : Նոյնպէս անոնց ալ որ

գայթակղէին՝ Աստուծոյ աչք կամ ձեռք կամ բե-
 րան լսելով , 'ի հակառակէն օրինակ կը բերէ ըզ-
 մարդ՝ որ Պատկեր Աստուծոյ կ'ըսուի . և կը բա-
 ցատրէ թէ նմանութիւնն Աստուծոյ և մարդկան
 իրենց հոգեկան կարողութեամբքն է , իսկ Քրիս-
 տոսի մարմինն՝ է ծննդեամբ 'ի Ս . Կուսէն :

Մեծ զարմանք է մեզի յիշել , թէ որքան այլան-
 դակ մոլորութեանց մէջ ընկղմեր են եղեր այն
 խեղճ երիցունքն . և եթէ այս թուղթս չըլլար՝
 գուցէ տնհաւատալի ալ ըլլար . սակայն երբ դի-
 տենք ժամանակին և տեղւոյ հանգամանքը այն
 Խառնափորեալ գաւառաց , ընդ մէջ մահմետա-
 կանաց և հակակիր Աստուծոյ անշատ մնացեալ
 Հայոց , զարմանքնիս կը թէթեմայ , ցաւերնիս ա-
 ւելնալով . այլ բարեբաղդ կը սեպեմք որ Ենոր-
 հալի մ'ալ կար այն ատեն այնքան խոր խաւարն
 ալ փարասելու :

Գալով Մատաղին՝ որ Ասորուց գայթակղու-
 թեան առիթ էր և Հայոց կուռի՝ անոնց հետ ,
 ինչպէս որ անկէ ետև ալ շատ հեղ եղած է առիթ
 գայթակղութեան և վիճի բազմաց , գիտնոց և
 սգիտաց , Ենորհալին թէ այս թղթին մէջ և թէ
 յետոյ ուրիշ թղթոց կը բացատրէ , որ այս բանս
 մէկ մը հին քրիստոնէից ագաթն , կամ ողորմու-
 թեան և սիրոյ կերակրոց նման է , մէկ մ'ալ մաս-
 նաւոր ազգային դէպք և հարկ մը . ինչպէս որ մեր
 Մեծն Ս . Սահակ հայրապետն ալ կ'իմացնէ , թէ
 երբ Լուսաւորչի քարոզութեամբն քրիստոնէայ
 եղան Հայոց քօւրմերն ալ , որք հեթանոսական
 զոհերով կ'ապրէին , և հիմայ ինչպէս ապրուստ
 ճարելը կը մտածէին , Լուսաւորիչ անոնցմէ ար-
 ժանաւորները քահանայ ձեռնադրեց , և ժողո-
 վըրդեան ալ թոյլ տուաւ որ փոխանակ զոհից և
 սպանիցի՝ եկեղեցւոյ և սղքատաց նուիրեն իրենց
 կենդանի ընծաները . զորս քահանայք օրհնած
 աղով ալ սրբելով , ընդունին թէ իրենց , թէ աղ-
 քատաց հոմար և երբեմն նաև մատուցողաց ալ
 մասն հանելով : Որքան տարբեր էր այս նուէրս
 հին օրինաց զոհերէն , որոց արևուն կը համարուէր
 իբրև 'ի քառութիւն մեղաց և 'ի հաշտութիւն , և
 պէսպէս խորութիւններ պահանջէր . իսկ Մա-
 տաղն՝ պարզ ողորմութեան և քրիստոնէական
 սիրակցութեան նպատակաւ էր . և որպէս զի
 այսպէս ալ ճանչցուի և գայթակղութիւն չըլլայ՝
 կը պատուիրէ Ենորհալի՝ կաթողիկոս եղբօրն հրա-
 մանաւ , որ նախնեաց աւանդութեան մէջ եկա-
 մուտ և աւելորդ սովորութիւններ չխառնեն . վեր-
 ցընեն այն նարօտները և պէսպէս զարդերը՝ որովք
 զմատաղը զարդարէին . և սուսաւ այնպիսի ձեւեր
 կամ ծեսերը՝ որ զոհի նմանութիւն մը կըրնային
 տալ , եթէ այնպիսի բան մտած էր տեղ մը : Իրեննե-
 րուն աւելորդ և սգիտական սովորութիւններ խո-
 տելով՝ աւելի ալ պիտարակելի կը ցուցընէ Աս-
 րուց սգիտութիւն և ատելութիւն , որք Հայոց ընծած
 պանիրն անգամ չէին ուտեր , վախնալով օր գուցէ
 մատաղ եղած գառին խախտցէն խառնուած ըլ-
 լայ անոր մէջ . և կը յանդիմանէ անոնց խորական
 և օտար ազգերէ տարբեր սովորութիւն և ծեսե-
 րը , Մկնապիլծ և մեռելոտի ուտելնին , Ուրբա-
 թաւը , խոստովանութիւնը մերժելնին , և այլն :
 Եւ եթէ այնքան գայթակղելի կ'երևի , կ'ըսէ , ս-
 նոնց՝ Հայոց մատաղը , ուրիշ ազգաց մէջ այս ս-
 վորութիւնս չըլլալուն համար , թող նային և տես-

նեն զլատինացիս, որք գոնէ Ջատկին տօնին գառնուկ կը խորովեն և խորանին վրայ կ'օրհնեն և կը բաժնեն. այս բանս իրենց եկեղեցւոյ առաջին դարուց մէջ ալ կար, և Ղուսաւորիչ ալ անոնց հետեւեցաւ, կ'ըսէ: Իսկ աղով և ձիթով պատարագի հաց պատարաստելն՝ ո՛ւր կը տեսնուի՝ բաց յԱսորոց:

Կը յիշէ ուրիշ մոլորութիւն կամ կարծիք մ'ալ Դրախտին վրայօք, զոր նոյնպէս Ասորիք հաներ և մոռուցեր էին այն Հայոց մէջ, թէ Ադամայ Դրախտ ըստւածն՝ իրօք և զգալի պարտեզ, ծառ պտուղ պէտք չէ իմանալ, այլ այլբանութեամբ մտորացեալ բան մը, կամ երկնաւոր պարգև մը. գոնէ երկրիս վրայ չկար այնպիսի տեղի: Ասոր ալ ամենեկին անտեղի ըլլալը պարզ խօսքերով կը ցուցնէ Ենորհալին. իրաւ ուրիշներն ալ և ոմանք 'ի գիտնականաց ևս գրախտին տեղւոյն և երկրիս վրայէն վերջընեւուն վրայ՝ տարբեր կարծիքներ ունեցան, բայց ողջամիտ մարդ մը չէ ուրացած որ Ադամայ և Եւայի պատմութեան մէջ յիշեալ պտուղքն նիւթական չըլլան. և հարկ է որ պըտուղն ալ ծառէն ըլլայ, ծառն ալ 'ի պարտիզին: Դրախտը այլբանեալ և ոչ զգալի ըսողք՝ զեկեղեցին ալ նոյնպէս կ'ուզէին ընել. և դեռ գըտուէին այն կողմերը մոլորեալ Հայ Թոնդրակեցի աղանդաւորներ, որք չէին ընդուներ նիւթական եկեղեցի և եկեղեցւոյ սրբազան սպասներ, և ոչ իսկ զխաչ և աղօթք և օրհնութիւն. այլ եկեղեցի մնը եմք կ'ըսէին, և այն. իրենցմէ առաջ և վերջն ելած աղանդաւորաց նման: Որոց կ'իմացնէ Ենորհալին, թէ հաւատացեալք արգարև բանական կամ բարոյական եկեղեցի են. այլ ամենեկին արգելք չէ, մանաւանդ թէ հարկաւոր է որ իրենց հաւատոց յայտարար նշաններ և շէնքեր ալ ըլլան, ինչպէս իսա, աւետարան, մաշտոց, և եկեղեցիք և մատուռնք. և այն: Ինչպէս պատիւ և երկըր. պապութիւն ընծայելն ոչ էթէ անոր նիւթոյն է, այլ յիշեցուցած Քրիստոսին. և այն ալ յետ օրհնելոյ և օծելոյ զխաչն. նոյնպէս ալ եկեղեցեաց շէնութիւնն և օրհնութիւնն ամենահին է, մանաւանդ թէ քրիստոնէութեան հետ սկսեալ. որուն յայտնի համարձակութի տուող կայսրն Կոստանդիանոս՝ մեծ հանգիսիւ օրհնել տուաւ Երուսաղէմի նորաշէն եկեղեցին, և այն: Այս բաներուս վրայօք երկար գրեր էր ընդգէմ Թոնդրակեցւոց՝ Անանիա Նարեկացին, Ս. Փրիգորի Նարեկացւոյ քեռին, որոյ գրածները՝ կարգալ կը խրատէ Ենորհալին. զոր և մեզ փափագելի էր գտնել, վասն զի հիմայ չի գտուիր, կամ մեզի ծանօթ չէ: — Կ'իմացնէ, վերջապէս, Մաշտոցի համար ալ, որ յիւրաւի այս անուամբ վարդապետ մը եղած է, և եկեղեցական օրհնութիւններ և աղօթքները հաւաքեր է 'ի մէկ գիրք, որ այդ իր անունը առած է. աղօթքներն ինքն չէ հնարած, այլ ըստ մեծ մասին առջի հայրապետաց գրած և գրած կարգերն են, զոր ինքն և իր աշակերտքն թարգմաներ են. այլ թէ և իրեն շարագրածն ըլլային, կամ ուրիշ անձի մը, իրմէ առաջ կամ վերջ, ինչ փաստ կ'ըլլար, մինչդեռ սրբազան և արժանավայել բաներ են կարգադրութիւնքն և խօսքերն:

Այս ամեն ինչորոց վրայ երկարօրէն գրելով Ենորհալին՝ կ'ըսէ այս խրատով. « Ի դոյն հաստատեալ՝ դարձուսիք զլսելիս ձեր 'ի թիւր և 'ի

« մոլար բանից անիմաստիցն և 'ի մոլորելոցն. զի
« և աստի կենօքս խաղաղացեալք ոգւով, արժանի
« եղիցուք հասանել ուղիղ հաւատով և բարի
« գործովք՝ յանքոյթ և 'ի խաղաղ նաւահանգիստն
« խոստացելոց բարութեանցն. » և այն:

Այս 'ի Միջագետս գրուած Թղթոյս ժամանակն անյայտ է. այլ մէջը Ասորոց յանգիմանութիւն ըլլալէն կրնամք հետեւցնել, թէ կամ նախայիշեալ դիպուածէն ալ առաջ ըլլայ, այսինքն Փրիգորիսի ըրածէն և այրածէն, կամ անկէ բաւական ժամանակ վերջը, երբ հին կիրքերն նորէն արթնցեր էին, գէթ 'ի միտս տգիտաց: Յանգիմանութիւնքն թէ և չեն ծանր և կծու, այլ չեն երեւիր Ենորհալւոյ յետին Թղթոց մէջ, երբ ինքն ինքնօրէն կը գրէր, պարզ իր սրտին թելագրութեք, և ոչ վեհագունի մը: Ներսիսի վայել հմտութիւն և մանաւանդ զգուշութիւն՝ լաւ կ'երեւի այս Թղթոյս մէջ ալ, մանաւանդ առաջին ինչորոյն վրայօք, որ այնպէս փափուկ՝ միանգամայն և դիւրաշփոթ ինչոր մ'է, գոնէ մեր ազգին և նմանեաց և իրենց քննողաց և դատողաց համար. այլ իր սրտն չի օծումն և շնորհքն՝ որ հօս կը փայլեցընէ, ալ աւելի զտուութեամբ պիտի ցոլան և ծաւալին՝ իր ժամանակին և աստիճանին յառաջնութեամբ գրած Թղթոց մէջ, զոր ատենին պիտի նշանակենք, թէ և ոչ շատ երկարօրէն խօսելով որչափ հօս: Եւ այս առաջին առիթ ըլլալով՝ զայս ալ աւելցնեմք, որ Ենորհալին ինչպէս տաղաշափութեան և այլևայլ բաներու մէջ, այսպէս և Թղթագրութեան՝ մեր գպրութեան մէջ նախագաս օրինակ է. այս բանիս մէջ ալ՝ իր պապէն (Փրիգոր Մագիսարոսէն) զատ՝ ոչ ոք իրեն չափ Թղթոց աւանդ թողած է մեզի, կամ պահուած և հասած է մեզ. և ամենքն ալ այսպէս աստուածարանական չեն, աւելի ընտանեկանք ալ կան:

Ժ Բ .

Գերոտրիւն Ա. Լ. և Ն. — Հրաւեր Գրիգորիսի 'ի Լատինաց. Ժողովք Ա. և Երուսաղէմի:

Հայոց՝ Ասորոց հետ ունեցած յարաբերութիւններն ինչ կերպով ալ որ ըլլար՝ ծանր հետեւանք մը չէին ունենար. իսկ Յունաց հետ՝ այսպէս չէր: Մեր և այս ազգին հետ անցած քաջածն 6-700 տարուան միջոց՝ քիչ շատ յայտնի է ամենուս, թէ ըստ քաղաքական և թէ ըստ կրօնական տեսութեան. իսկ այս մեր հասած պատմութեան միջոցն՝ ամենէն սաստիկ հակառակութեան, վեճմանց, կռուոց և պատերազմաց յեղանակ մ'է. որ սկսաւ Բագրատունեաց թագաւորութեան վերնալէն, և սաստիկացաւ անոնց վերջին թագաւորին՝ Բ. Փաղկայ սպանմամբն 'ի Մանատեանց, և ասոնց ալ սպանմամբ յԱ. Թորոսէ, որոյ յաջորդեր էր եղբայրն Լևոն Ա. և զինուոց բռնութեամբ՝ եղբօրը, հօրը և պապուն տիրած սահմանները կը ջանար ընդարձակել, աւելի վրէժ-ինչորութեամբ և քաջութեամբ՝ քան իրաւամբք և զգօնութեք շարժելով: Ասով անխափր ամենուն հետ ալ երբեմն բարեկամ և երբեմն թշնամի կ'ըլլ

լար, Թերևս բաց 'ի Յունաց. ստեն մը Լատինաց (Անտիոքացոց) հետ միաբանելով Թուրքերը հալածեց իրենց բռնած տեղերէն. վերջը գծաւելով իր նիզակահացաց հետ՝ Թուրքաց հետ դաշինք դրաւ, կոխեց զԱնտիոք, և նեղեց զԻշխանը մինչև 'ի մահ (1130): Քանի մը տարիէն Անտիոքացիք ալ օգնական գտնելով Լեոնի վրայ յարձակեցան, բռնեցին և արգիլեցին յԱնտիոք, (1135): Նոյն ստեններն Յովհանն Կոմնենոս կայսրն Յունաց՝ ուզեր էր ըզ-Կոստանդիա՝ Անտիոքայ իշխանին դուստրը՝ իր մէկ որդւոյն հարսնացնել, որպէս զի զԱնտիոք ալ նորէն Յունաց ինքնակալութեան տակ ձգէ. Անտիոքացիք իմանալով զիտաւորութիւնը՝ մերժեցին. կայսրն՝ փոխանակ գեսպանաց՝ բանեցին խաւրեց, և սկսաւ գալ Անտիոքսոյ վրայ: Անտիոքացիք իրենց ազատութեան ճար գտան զԼեոն ազգաւել (1136). հետը դաշինք դրին, նիզակահացեցան ընդդէմ Յունաց: Լեոն աւաջնորդելով Հայոց և Լատինաց՝ գնաց պաշարեց զՍելեւկիա (յապրիլի, 1137): Յովհանն կայսր ալ խորագէտ և ճարտար էր, բայց աւելի ալ բաղդաւոր՝ բազմութեամբ զօրացը. Թշնամւոյն ըրածին յարմար ինքն ալ կը գործէր. Թողլով զՍելեւկիա՝ սկսաւ Կիւլիկիոյ գլխաւոր քաղաքաց վրայ յարձակիլ, որք բաւական ամրութիւն ալ չունէին, և մէկիկ մէկիկ աւելու: Անարգաբա՝ աւելի զօրաւոր էր. Լեոն անձամբ եկաւ պաշտպանելու զայն և երկար դիմացաւ. սակայն տեսնելով որ պիտի չկարենայ ապրեցնել, անկէ ամուր տեղ մը ձգեց զինքը, և մնացած ոյժը հօն կեդրոնացուց. այս էր Վահկայ բերդն: Կայսրն զԱնարգաբա նուաձելով՝ շուտ մը եկաւ զՎահկա ալ պաշարեց. քանի մը Լատին իշխանք՝ որք Երուսաղէմի կողմերէն կը դառնային՝ Անտիոքացոց ոմանց հետ միաբանած՝ եկան Լեոնի օգնելու. կայսրն Վահկայի քով գունդ մը Թողլով մնացեալ զօրօք դէպ յԱնտիոք սկսաւ վազել. Լատինք ստիպուեցան Թողլու զՎահկա և զԼեոն՝ և իրենց վտանգին ճար մտածել: Այս պէս իրարմէ զատելով զՀայս և զՅոյնա՝ կայսրն Յովհանն երկուքն ալ տկարացուց, երկուքն ալ նուաձեց: Լեոն երկայն տանի պաշար չունէնալով՝ հարկադրեցաւ անձնատուր ըլլալ երկու որդւոյն, (Ռուբէն և Թորոս Բ), և զրկուեցաւ 'ի Կոստանդնուպօլիս. Անտիոքացիք ալ հարկադրեցան կայսր գերագոյն իշխանութիւնը ձանձնալու, և քաղքին դռները բացին:

Այս կերպով Հայոց տիրութիւնն կամ բռնակալութիւնն 'ի Կիւլիկիա՝ գրեթէ առ ժամն ոչընչացաւ. և Յոյնք առիթ գտան վրէժխնդրութեան 'ի Հայոց, անխտիր կոխելով, աւրջարկելով, կոզոպտելով զսուրբ և զանսուրբ տեղուանք, զբերդ և զվանք, զքաղաք և զեկեղեցիս: Որոց հետեւէն իմն սկանստես ըլլալով մեր Ենորհալի եպիսկոպոսն, որչափ ալ չէզոք երկրի մը վրայ էր, Ժողովն իշխանին տէրութեան մէջ, ընդ մէջ Անտիոքայ և Եգեսիոյ, և որչափ ալ Լեոնի ամեն գործոց չէր հաւնէր, սակայն Յունաց այս անխտիր և անգութ գործոց վրայ սաստիկ վշտանալը, և իր ազգայնոց կարեկից ըլլալը, կը յայանէ հին զբրբի մը մէջ յիշատակագրելով. « Յորժամ էլ Թագաւորն Հոռոմոց յաշխարհն Կիլիկիացոց, և առ զնա « յիշխանէն Լեոնոյ, որ էր Հայ ըստ ազգի և ըստ « հաւատոյ. և աւերեաց զբազում վանորայս և

« զեկեղեցիս. և զնշանս անբուժականս խորտաւ « կէին, և անհնարին հարուածս ազգի մերում « հասուցանէին քինարար. և այս եղև 'ի Թուխ « ԵԶԶ » (1137): Այս համառօտ յիշատակու. Թիւնն պատմական շատ յարգ կրնայ ունենալ՝ այնպիսի գրչէ մ' աւանդուելով. այլ առաւել յարգի են մեզի այն կարճ խօսքերուն մէջ յայանուած մարգասէր և ազգասէր զգացմունքն, որք կարօտ չեն մեր մեկնութեանը. և որք այնքան շնորհօք փայլեալ երիտասարդ սրտին մէջ՝ 'ի հարկէ գերագոյն և առաքինական կիւրք մը գրուելու են և ոչ ռամկական ազգային սէր կամ նախանձ մը:

Լեոնի և Անտիոքացոց դիպուածն՝ որ իրենց ձախող եղաւ ընդդէմ Յունաց տկարանալով, գոնէ յայսմ յաջող եղաւ՝ որ երկու զրկեալ ազգաց մէջ (Հայոց և Լատինաց) աւելի կարեկցութիւն և սէր մտուց. և առ ժամանակ մը դադրեցան երկու գըրացի տէրութեց մէջ հակառակութիւն, որ յետոյ Բ Լեոնի ստեն նորէն պիտի ծագէին և սաստկանային ուրիշ պատճառաւ: Իսկ այժմեան բարեկամութիւնն՝ աւելի ալ ձանձցուց զիրենք իրարու, և փոխադարձ յարգել տուաւ իրենց բարի բարի յատկութիւնները և սովորութիւնները: Այլ պէտք է խոստովանիլ որ այս բանիս գլխաւոր առիթն էր մեր սքանչելի Պահլաւունի եղբարց վարքն և վարքնապետութիւնն. որք Անտիոքայ սահմանաց մէջ բնակելով յայտ յանգիման ամենեցուն կը փայլէին, անկարօտ վկայի և համբաւոյ. և երկու ազգաց ալ պարծանք էին, Հայոց՝ իբրև բնկաց, Լատինաց՝ իբրև անոնց քաղաքական իշխանութեան տակ գտուելով. վասն զի, ինչպէս որ վերը յիշեցինք, իրենց աթոռն այն ստեն էր « յերկրին Անտիոքայ, 'ի գաւառին Տըլքոյ, 'ի փոքրագոյն գը. « զեակն Մով »: Բնական էր որ բնակակցութիւնն պահանջէր բանակցութիւն ալ, և կրօնական տեսութեանց միաբանութիւն և միագործութիւն. և այնպէս ալ եղաւ: Մեծ Վկայասիրին անձամբ նորոգեալ ծանօթութիւնն և յարաբերութիւնն ընդ Լատինաց եկեղեցւոյ, ալ աւելի զարգացաւ նախ այս իր յաջորդաց տանն, և յետոյ ասոնց յաջորդաց և Լեոն Թագաւորի օրով: Սրէք կրօնախառն միաբանութեան դէպք կը յիշուին Փոքր Վկայասիրի և Ենորհալոյն տանն, որք մեր եկեղեցական պատմութեան ալ մեծ գիտելիք և գիտելիք մը պէտք է ընծայեն. և անշուշտ արգէն այսպէս կ'ըլլային, եթէ դէպքն մանրապատում աւանդուած ըլլային կամ մնային. այլ ոչ միայն մեր պատմիչք հարեանցի յիշեն, այլ և Լատինաց յիշատակք և ժամանակագրութիւնք համառօտ են այս միջոցիս, և կարևոր յիշատակարանք և Կոնգրակք՝ կորուսեալ կամ գեռ անյայտ:

Առաջին դէպքն է Անտիոքայ Ժողովն, յամի 1138 կամ 1139¹. Թուի թէ առաջ և ետև քանի մը անգամ ժողոված են հօն Լատին եկեղեցականք և զլխաւորք ժողովրդեան, իրենց քաղաքախառն կրօնական խնդրոց համար. իսկ ծանօթագոյն զի պուածն այս է, որ յետ մահուան Բեռնարդոսի առաջին Լատին պատրիարքի Անտիոքայ (1136),

¹ Ոմանք, ինչպէս նաև այժմու մեծ Պատմիչ Ժողովոց շէքէէ (Ե. 397) այս ժողովս կը գնեն յամի 1159, յաջորդ տարին ալ Երուսաղէմի ժողովը. այլք աւելի առաջ կամ ետև:

անոր յաջորդին համար շփոթութիւնք եղան: Իժբարգտարար այն միջոցին Հոռովմայ մէջ ալ շփոթութիւն մը կար, Իննովկենտ Բէ կանգնելով հա. կառակաթու Անակլետ Բ մը. այս բանս առիթ առնելով ՌատուլՖ՝ ազգաւ Փրանկ եպիսկոպոսն, հաճութեամբ Անտիոքայ ազնուականաց, պատրիարք նստաւ. և կէս մը Հոռովմայ աթոռոյն շփոթութիւնը պատճառելով, կէս մ'ալ Անտիոքայ երբեմն Ս. Պետրոսի աթոռ ըլլալը, (բայց աւելի իր յանդգնութիւնը), ինք ղինքը հաստատեց 'ի պատրիարքութեան. ինքնին օրհնելով և վիզը անցնելով զգալիա՝ զոր Ս. Փահաւայապետք Հոռովմայ կու զրկեն իրենց պատրիարքաց, նախագահից և պատուաւոր արքեպիսկոպոսաց: Ասոր վրայ ուրիշ անխոհեմութիւններ ալ աւելցնելով կղերը և ժողովրդեան մէկ մասը իրեն դէմ գրգռեց. որք ղիմեցին առ Ռոճիթ Թագաւորն Սիկիլիոյ: ՌատուլՖ վախնալով ասոր իշխանութենէն՝ անձամբ գնաց 'ի Հոռովմ, և խորագիտութեամբ արգարացուց ղինքն առաջի Իննովկենտ Պապին, և ընդունեցաւ անկէ պալիու. մը: Սակայն չկարցաւ զիւրաւ դառնալ յաթոռոյն պիսիսի ընդդիմութիւն տեսաւ յԱնտիոք՝ որ կեանքն ազատելու համար քաշուեցաւ 'ի Սեւա Լեռները, և ասէն մը պահուեցաւ, մինչև որ Զարտարութեամբ Զամբայ բացաւ և նորէն մտաւ նստաւ յաթոռ: Սակայն Քահանայապետն Հոռովմայ բուրովին վստահ չէր անոր վրայ. հարկաւոր սեպեց նուիրակ մը խաւրել, որ կ'ըսուի Լէկադ, և քննել Անտիոքայ խնդիրը: Առաջին լեկադն յԱնտիոք չմտած մեռաւ, և ոմանց կասկած բերաւ անբնական մահուան. տեղը զրկուեցաւ Ռատիոյ եպիսկոպոս Ալպերիկ Կարդինալն, որ հրատարակեց ժողովք բանալ յԱնտիոք նոյեմբեր ամսոյ վերջին օրը, քաղքին Ս. Պետրոս մայր եկեղեցւոյն մէջ. ուր գումարեցան՝ Սրուսաղէմի պատրիարքն Գուլիէմոս, Տիրոսի արքեպիսկոպոսն, և ուրիշ տասնիւ չափ արքեպիսկոպոսուք և եպիսկոպոսուք և վանահարք Լատինաց, և զըլ խաւորք Անտիոքայ: Յայտ է որ պէտք էր երկպառակութիւն ըլլալ Անտիոքայ մէջ 'ի պատճառս իրենց անուանեալ պատրիարքին, ոմանց կողմնակից ոմանց հակառակ ըլլալով. այլ վէճն շատ չերկարեց՝ ՌատուլՖի նոր պնդագլխութեամբը. որ իրեք անգամ հրաւիրուելով չերկցաւ 'ի ժողովին, և ըստ եկեղեցական օրինաց՝ մերժեցաւ յաթոռոյն և բանագրեցաւ. և իբր յանցաւոր՝ Անտիոքայ իշխանն բռնեց և բանտեց զնա բերդի մը մէջ. ուսկից փախելու հնարքն ալ գտաւ և գնաց 'ի Հոռովմ, և հօն մեռաւ տարակուսական մահուամբ, կամ անկէ նորէն լինելով Զամբուսն մէջ: Անոր տեղ հաստատեցին ուրիշ Փրանկ մը, Էմբրի կամ Ամարիկ անուամբ, որոյ գլուխն ալ շատ փորձանք եկան իր երկար պատրիարքութեան միջոց:

Արդ այս ժողովոց առթիւ հրաւիրեցաւ մեր Պահլաուունի կաթողիկոսն ալ իր Ենորհալի եղբարքն յԱնտիոք. զորոնք զանց ընել և թողուլ ալ անկարելի իմն էր, այնքան մօտք և այնքան մեծք ըլլալով:

« Մեծն յԱնտիոք ժողովն եղեալ, Ինգրոզ սոցա արագ ելեալ ».

կ'ըսէ Լամբրոնացին. իսկ Կիրակոս Պատմիչ շատ

մեծարանութեամբ կ'աւելցնէ, թէ կաթողիկոսին հասած ատեն՝ « Ալ ամենայն քաղաքն ընդ « առաջ նորա ջահիւք և լապտերօք, և մեծաւ « պատուով տարեալ նստուցին զնա յաթոռն « Պետրոսի առաքելոյն »: Պետրոսի աթոռ կոչուիլն Անտիոքայ յայտնի է. իսկ այս աթոռ մէջ այն աթոռը նստիլն կը յարմարէր Պապին լեկագին, որ նախագահ էր ժողովոյն, և թէ կըրնայ ըսուիլ յաթոռն Պետրոսի նստիլ: Սակայն այս ժողովն մէջ յիրաւի մեր կաթողիկոսին և իրեն ներքին գտուիլն՝ աւելի պատուաւորաբար համարելու է քան թէ հարկաւորաբար, կամ կարեւոր քննութեանց համար. 'ի վերայ այսր ամենայնի՝ երբ երկու անման ծէսք և լեզուք եկեղեցեաց՝ մէկ տեղ գան, բնաբար և սարբերութիւնք գիտուին, և խօսք կ'ըլլան. գուցէ այս բանս կ'ակնարկէ Լամբրոնացին, վերը յիշածնուս վրայ աւելցնելով:

« Ուր հանդիսիւ 'ի ճահ խօսեալ, Ունկըն դնելով նոցա՝ նուաճեալ ».

այսինքն ժողովական հանդիսին մէջ մերոնք ալ, (անշուշտ Ենորհալի լեզուն) պատշաճ և վայելուց կերպով խօսեցան, և լսողքն Լատինք՝ հաւանեալ համոզեցան. և թէ կրօնական տեսութիւն մ'էր խօսուածքն, և եթէ պատուազրական պատասխանի մը, կամ յորդորակ մը սիրոյ և միաբանութեան:

Այս առաջին առիթն Լատինաց հետ միաբան ժողովակցութեան՝ պատճառ եղաւ անմիջապէս երկրորդի մ'ալ. Պապին լեկագն արգէն զիտաւորութիւն ունէր երթալու յԵրուսաղէմ, Ս. Սիոնի եկեղեցւոյն նուակառիք ընելու. թէ հանդիսին փառաւորութեան համար և թէ մեր կաթողիկոսին փառաց և իր եղբոր շնորհաց համար, թափազեցաւ որ մէկ տեղ կասարեն այն սուրբ և շքեղ գործը. և ըստ ոմանց միաբան ալ ըրին իրենց Զամբորդութիւնը, և մտան 'ի սուրբ քաղաքն: Ենորհալոյն ալ մէկտեղ ըլլալն չի վկայուիր. բայց երկուքն ալ հաւանական կըրնայ ըսուիլ, թէ երթալն և թէ մնալն՝ իբրև աթոռակալ իր եղբորն 'ի Կաթողիկոսարանին: Իսկ Գրիգորիսի երթալն և փառօք ընդունուիլն թէ Լատինք վկայեն և թէ մեր պատմիչք. միայն թէ Անտիոքայ ժողովոյն պէս՝ այս Սիոնի ըսուած ժողովոյն ալ պատմութիւնն մանրամասն գրութեամբ չէ հասած մեզի: Այլ նկատմամբ մեր պատմութեան, երկու գլխաւոր և կարեւոր բան յայտնի վկայուի երկու ազգին գրոյններէն ալ. մէկ մը մեր կաթողիկոսին մեծափառ երկնալն և այնպէս ընդունուիլն. մէկ մ'ալ Հայ և Լատին եկեղեցեաց անխորհիր միութեան բանակցութիւն ըլլալն հօն և հաստատուիլն: Մեր այն ատենի ժամանակագիրն Սամուէլ կը յիշէ այս բաներս. նախ թէ Գրիգորիս իր վարուց մաքրութեան և շնորհաց համար էր « Պատուեալ փառաւորութեամբ, ոչ միայն « 'ի մերոյ ազգէս, այլ և յօտարասեռ թագաւոր « բաց և իշխանաց և պատրիարքացն »: Այս պատրիարքաց հօն ներկայ գտուողն էր տեղւոյն բընիկն, այսինքն Սրուսաղէմին, որ և լեկապին և կաթողիկոսին հետ մէկտեղ Անտիոքէն եկաւ. իսկ իշխանաց մէջ գլխաւորներէն մէկն եղաւ այս ժո.

զողոյս մէջ ալ ժողովն, մեր կաթողիկոսին բնական տեղեաց իշխեցողն, որ գուցէ նոյնպէս ուղեկից եղած էր հայրապետացն. իսկ թագաւորաց մէջ յայտ է որ Երուսաղէմինը փնտռելու է հօս, որ էր այն ատեն Յուլիոս կոչուածն: Ուխտերնին և Քրիստոսի Չարչարանաց և Յարուժեան մեծամեծ տօները կատարելէն ետև, մեծաւ փառօք և հանդիսէ՛ զատկին երկրորդ օրը կատարեցին Ս. Սիոնի նաւահասալքը. այսինքն է Սիոն ըսուած բարձրաւանդակին վրայ՝ Քրիստոսի Ընթրեաց Վերնատան տեղ շինուած՝ եկեղեցին նորոգուած էր. զայն հանդիսապէս օծեցին լեկազն և պարիսարգն և մեր կաթողիկոսն. և երրորդ օրն ալ հօն գումարեցան ՚ի ժողով, որ կըրնայ ըսուիլ թէ միայն Հայոց համար եղաւ, կամ ասոնց և Լատինաց յայտնի միաբանութեան. վասն զի սակէ զատ ուրիշ խնդիր մը չի յիշուիր այս Սիոնի ժողովին մէջ: Մասնաւոր պատուով բազմեցուցին մեր կաթողիկոսը լեկազին քով, կամ ամենէն բարձր աթոռին, ինչպէս վկայեն յետին պատմիչք. և նմանապէս պատուաւոր տեղուանք արուեստն իր հետ եկող եպիսկոպոսաց Հայոց, որոց զլուսւորն ըլլաւու էր, (եթէ հօն էր Ենորհալին), Եփրատոսի Հայոց և Երուսաղէմի եպիսկոպոսն: Հայոց եկեղեցւոյն Ուխտին այսպիսի երևոյթն առաջին անգամ էր Լատինաց ժողովի մէջ, և թուի թէ անոնց եպիսկոպոսներէն և աթոռակիցներէն պակաս թուով չէին մերայինք ալ. այլ թուէն աւելի արեւելեան և հայկական կերպարանքն, հագուստն, և ձեն ու ծէսն, շքեղութիւնն, և մանաւանդ մեր Պահլաւունոյն իսկական շնորհքն և արժանիքն՝ այնպէս տպաւորութիւն մ'ըրած են հանդիսականաց վրայ, որ կարծես թէ անոնց ժամանակակից ամենէն մեծ լատին ժամանակագիրն Գուրլէէ մօս՝ Տիւրոսի եպիսկոպոսն, դեռ 40 տարի վերջ ալ այս գիպուածը գրելու ատեն՝ պատկառանք մը կը զգայ, և բաւական չի սեպեր զՔրիզոստոս անուանել Մեծ կամ Ամենամեծ քահանայապետն Հայոց (Maximus Armeniorum Pontifex), այլ մանաւանդ թէ, կ'ըսէ, ամենայն եպիսկոպոսաց որք ՚ի Մեծ և ՚ի Փոքր Հայս, ՚ի Կապադովկիայ ՚ի Պարս և ՚ի Մարս կը գտուին, գլխապետն և ընտիր Վարդապետ, որ կաթողիկոս կոչուի. (Omnium Episcoporum... Princeps et Doctor eximius). իսկ իր Հայ արուեստակիցն և ատենակիցն՝ Սամուէլ մեր Անեցի՛ կը յաւելու. « Անդ « ծանուցեալ և իմացեալ զառատահոս ծաւալ « լուսն աստուածային շնորհին ՚ի վերայ Հայրապետ « տին՝ ազգն Հռովմայեցոց՝ իշխողք աշխարհացն, « որ Փռանդք կոչին, և ըստ վայելչազգեաց և « պատշաճագեղ տեսիլ մարմնոյն՝ ծանեան և ըզ « հոգւոյն գեղեցկութիւն, և ՚ի բանս հաւատոյ « զճմարտութիւն՝ ամենեւեմք. զոր պայծառ և « կանոնական կարգաւ և բանոնով վարդապետ « տական ճոխութեամբ բարբառէր: Ուրխարայան « հաճելութեամբ, և առաւել սէր հաստատեցին « ընդ Հայրապետին և ընդ ազգս մեր: Եւ այս ա « մենայն ըստ իմամոցն Աստուծոյ. զի ոչ մերժէ « Տէր զժողովուրդս իւր, ըստ Սաղմոսերգողին »: Այս իմաստը կը համառօտէ և Կիրակոս պատմիչ մեր. « Ազգն Փռանկաց՝ որ իշխէին քաղաքին (Ե « ռուսաղէմի) և պարիսարքն նոցա՝ առաւել սէր « հաստատեցին ընդ ազգիս մերոյ՝ վասն նորա. զի

« էր նա բարի տեսեամբ, գիտութեամբ սուրբ « զրոց զարգարեալ: Զհին գաշինս սրբոյն Քրիզո « ռի և Տրդատայ, և Կոստանդիանոսի և Սեղբես « տրոսի՝ վերստին նորոգեցին առ սովաւ »: Խնդիրներն՝ որոց վրայ եղաւ առաջարկութիւն ՚ի կողմանէ Լատինաց, որոշակի չեն յիշուիր, այլ կըրնան գուշակուիլ, որ մէկ մը ծիսից և տօնից օրերուն համար էին, որոց պատճառն իմացնելու Հայրապետն մեր՝ համոզեց զերէնք. մէկ մ'ալ հաւատոյ քանի մը վարդապետութեանց, որոց որոշ կամ յամենայն շիտակ բացատրութիւն չէին տար ամեն կողմի Հայք և անոնց վարդապետքն: Այս բանս իսխտ շատ զգուշութեամբ և փափկութեմ կը նշանակէ Տիւրացին վերոյիշեալ՝ որ մեծ պատիւ կ'ընէ իր խոհմութեանն ալ. և օրինակ կ'ընծայէ հաւատոյ խնդրոց վրայ քննողաց և վիճողաց, որ ընտրեն զանձինս, և մասնաւորաց կարծիքը և խօսքը՝ հասարակաց չտեսնեն. և դարձեալ անձանց պատիւն ըստ աստիճանին և վարուց յարգեն, թէ և անոնց գիտութեան կամ կարծեաց մէջ տարակուսական և սխալ գտնեն. « Խօսք եղաւ, կ'ըսէ, հաւատոյ այն յօգուածն « ըուն վրայ՝ որոց մէջ մեզմէ տարբերիլ կ'երևի « իր ժողովուրդն. և իր կողմանէ խոստումն եղաւ « շատ բանի մէջ ուղղել »: Երբոր երկու կողմէն այսպէս պատուասիրաբար և խոհմարար վարմամբ հաւանութիւն եղաւ, և կաթողիկոսն Հայոց օրինաւոր բաներու մէջ զիջաւ և խոստացաւ, բոլոր ժողովական Հարք ելան և մեծարանօք զըկեցին և համբուրեցին զինքը, ինչպէս կ'աւանդեն եկեղեցական պատմիչք ոմանք: Այս այսպէս թուի թէ մէկ աւուր և մէկ նշատի մէջ կատարեցաւ ժողովն Սիոնի. յետ որոյ իւրաքանչիւր կողմանք զատուեցան իրենց առանձնական գործոց գացին. Լեկազն դնաց ՚ի Պաղոմայիս (ՍԱՔՔԵԱ), որ Փռանկաց առաջին ամրոցն էր Սուրբ Երկրին մէջ, իրենց խնդիրները տեսնելու համար. և քիչ ատենէն բարի լուրերով գործաւ առ Ս. Պապն Իննովկեսիսոս Բ ՚ի Հռովմ, գուցէ սիրոյ և մեծարանաց թուղթ մ'ալ հետը տանելով ՚ի Քրիզոստոսի կաթողիկոսէ մերոյ. որ կամ պատասխան ալ էր Պապին թղթին, կամ առիթ ասոր պատասխանին: Երրորդ և աւելի ալ նշանաւոր յարաբերութեան վրայօք ընդ Լատինաց՝ պիտի խօսիմք քիչ մը վերջը, ՚ի Գլ. Ժ՛ի:

ԺԳ.

Նորոգութիւն Արուսեակից կարողիկոսութեան. — Վահրամ և Վասակ հօրեղբարք Շնորհալոյն՝ իշխանք յԵգիպտոս. — Այցելութիւն Քրիզոստոսի. — Հայ Վզրուչք յԵգիպտոս:

Քրիզոստոսի յաթուէն հեռացած ատեն և հաւանորէն յԱնտիոք եղած ատեն, զոր Կիրակոս պատմիչ յարեմուտս գտուիլ կ'ըսէ. « Էր նա ՚ի

4 Cum hoc etiam de fidei articulis, in quibus nobis dissentire videtur populus ejus, habitus est tractatus, et ex parte ejus promissa est in multis correctio.

« կողման արեւմտից », փոխանակ Արեւմտեայց քով ըսելուն¹, իրեն նուիրակութիւն մ'եկաւ Աղուանից աշխարհէն, 1139 տարւոյն սկիզբները, այն տեղին համար կաթողիկոս մը գնելու: Հայոց ամենէն մերձաւոր, հաւատարմից և հաւատարիմ ժողովուրդ՝ Աղուանիք եղած էին, Տրգատայ և Գր. Լուսաւորչի օրերէն սկսեալ, երբ սա իրենց առաջնորդ խաւրեց իր թողը՝ Գրիգորիս պատանին. և անկէ ետեւ սովորութիւն եղաւ որ ՚ի Հայոց առնուն իրենց եպիսկոպոսապետաց ձեռնադրութիւնը. և ալ աւելի կապուեցան իրարու հետ, երբ ՚ի վերջ Ս. գարու կամ ՚ի սկիզբն Էփն՝ Հայք ուզելով իրենց կաթողիկոսը պատրիարք անուանել զԱղուանիցն Արքեպիսկոպոս անուանեցին, Վրացը՝ Մեթրապոլիտ, որ աւելի ստորին սաստիճան համարուէր. ընդ որ ահաձեցան Վիրք, որ աւելի մեծ ազգ էին. սակայն որովհետեւ Աղուանիք անմիջապէս Քրիստոսի աշխերաններէն ընդունած էին սուրբ Գրիգորը՝ Հայք զատուէր նսանք մեծար սեպկեցին. սակից ծագեցաւ կ'ըսեն նմանք ՚ի պատմեցաց մերոց՝ Վրաց գժտիլն և զատուիլն ՚ի Հայոց: Թողով զանոնք՝ ստոյգ է որ մեր եկեղեցական պատմութեան մէջ շատ հեղ կը տեսնուի Հայոց և Աղուանից յարաբերութիւն. գրեթէ առանց Հայոց Աղուանիք ժողով չէին ըներ, մերոց ժողովոց և կաթողիկոսի ձեռնադրութեան՝ շատ հեղ ներկայ կ'ըլլար անոնց կաթողիկոսն: Երբ Յովհաննէս Բագրատունի թագաւոր մերժեց ըզ. Պետրոս Գեառգարձ յաթողոյ՝ Աղուանից կաթողիկոսն եկաւ միջնորդելու հաշտութեան, և նորէն յաթողը նստուցանելու զՊետրոս: Վերջերն ալ պիտի տեսնենք որ Ենորհալի Միաբանութեան խնդրոյն համար անհրաժեշտ հարկ կը սեպէր Աղուանից կաթողիկոսին ներկայութիւնը, ինչպէս որ յիշուի ալ ներկայ եղաւ և գահագլուխ՝ յետ Գրիգորի Տղայոյ մեր կաթողիկոսին՝ ՚ի ժողովն Հռովմայի, յետ 40 տարւոյ մեր հիմնական յիշելու գէպքէն: — Գրիգորիս կաթողիկոսութեան սկիզբները Աղուանից ալ մանկահասակ կաթողիկոս մը գրուած էր, Ստեփանոս անուամբ, որ և սակաւակեաց եղաւ, յետ տարւոյ և կիսով վախճանելով. անկէ ետեւ՝ չի յիշուի ինչ պատճառաւ աթոռն անյաջորդ մնաց ութ տարի². իրենց սակաւաթիւ եպիսկոպոսուիք ալ գրեթէ բոլոր մեռան, մինչև օտար թեմեր կը խաւրէին քահանայացուները ձեռնադրուելու:

Արդ այս միջոցիս վարդապետք աշխարհին, (որ ոչ էր հին աշխարհն Աղուանից՝ Կովկասէն անդին, այլ մեր Հայոց Ուտի և Արցախ նահանգներն), ժողովելով ՚ի խորհուրդ՝ առաջնորդութիւն Գրիգորի վարդապետի Թոքակերի օրգի կոչելով՝ աշակերտի մեծանուն Դաւթի Ալաւկայ օրգւոյն (+ 1130) զորս յիշեցի (131), ընտրեցին կաթողիկոս Գագիկ անուամբ պատանին՝ նախորդ կաթողիկոսին Ստեփանոսի հօր (Կարճիկ) եղբոր (Քէրոզայ) որդին (և թոռն Կարապետի). արժանաւոր վարդապետ մ'ալ նուիրակ խաւրեցին առ կաթողիկոսն Հայոց, ինչորեւզով որ եկողը եպիս-

կոպոս ձեռնադրէ, և անոր հետ ինքն ալ պատուաւոր եպիսկոպոս մը խաւրէ՝ որ զուրիշներ ալ ձեռնադրեն և ապա զկաթողիկոսն ալ: Կատարեց Գրիգորիս անոնց խնդիրը. և եթէ ստոյգ է Կիրակոս Պատմիչին ըսածը՝ հարկ է որ յԱնտիոք եղած տանն ձեռնադրած ըլլայ զնուիրակն Աղուանից. որոյ ընկեր գրաւ զՍահակ՝ իր իրան եպիսկոպոսը, որ անուանէր և եպիսկոպոս Կարնոյ. ստոր յանձնելով իր կողմանէ ձեռնադրել իրենց եպիսկոպոսապետը: Ըստ այսմ երբոր հասն յԱղուանս՝ քանի մ'եպիսկոպոս ձեռնադրեցին (12, ըստ Կիրակոսի), քանի մ'ալ մօտակայ կողմերէն ժողովեցին. և նոյն տարին Հոգեգալթստեան տօնին ժողովեցան մեծ հանգիսիս ՚ի բերդաքաղաքն Տաւուշ, ուր Բագրատունեաց ցեղէն փոքր թագաւոր մը նստէր, Աբաս անուն, նոյնպէս փոքրիկ թագաւոր եղբայր մ'ալ ունէր ուրիշ բերդաքաղաքի մը (Մաճնաբերդ) տէր՝ Դաւիթ աւուն, մէկ (եպիսկոպոս) իբրայր մ'ալ՝ Ստեփանոս անուն. որք եկան հօն հանդերձ վարդապետք և եպիսկոպոսք, և առաջնորդութեամբ Սահակայ՝ ձեռնադրեցին զԳագիկ ՚ի կաթողիկոս, անունն ալ փոխելով ՚ի Գրիգորիս: Յետոյ նորէն ժողովեցան առջինէն աւելի եկեղեցականք և կրփնաւորք Վարդապետի տօնին՝ Կաթողիկոսի-քար ըսուած բերդը, և երկու եպիսկոպոս ձեռնադրեց նորընտիր կաթողիկոսն, ու մեծ հանգիսիս միւսուն օրհնեց և բաժնեց¹:

Գրիգորիս կաթողիկոսի Երուսաղեմայ ճանապարհորդութեան վրայք ուրիշ յիշատակ չկայ առ պատմիչս. այլ շատ հաւանական և գրեթէ անասարակոյս ալ երևի որ անկէ անցած ըլլայ յԵգիպտոս, յայցելութիւն սուրբ տեղեաց, այսինքն Ս. Հարց Ծգնաւորաց վանորէից, միանգամայն և իր իսկ հօրեղբարց գերեզմանաց, և գուցէ գեոմօս ՚ի գերեզման ապրող և Ծգնող ծերունոց մը: Մեծ Վկայասիրին հօն երթալուն զիպուածին յիշեցինք որ իր քեռորդին և համանուն Գրիգորիսը՝ Նգիպտոսի և Պաղեստինու առաջնորդ կարգեց արքեպիսկոպոսական պատուով, զոր ոմանք և պատրիարք և կաթողիկոս կ'անուանեն. և սա ըստ խոստման քեռւոյն առ Թալիֆայն Նգիպտոսի՝ շատ Հայեր կանչեց և բնակեցուց անոր իշխած երկիրներուն մէջ. սասնից հետ հրաւիրեց և եկան իր երկու իշխանազուն եղբարքն ալ՝ Վահրամ և Վասակ. միայն իրենց միւս եղբայրն՝ Ապիրատ՝ հայր մերոյ Գրիգորիսի և Ենորհալոյ՝ մնաց իր հայրենի ժառանգութեան մէջ: Վահրամ և Վասակ Թալիֆայից ծառայութեան մէջ մեծ պատիւ գտան, մանաւանդ զինուորութեան կարգին,

¹ Ապա թէ ոչ հարկ էր կարծել թէ Գրիգորիս յԵրուսաղեմա եկած ըլլայ, որոյ ուրիշ նշան կամ յիշատակ բնու չկայ:

² Կիրակոս Պատմիչ 25 տարի կ'ըսէ:

¹ Այս խնդակ և հոգեւոր գործերէն քիչ օր ետեւ ստակալի սուգ մը հասաւ (30 սեպտեմբ. 1159) այն կողմերուն, սաստիկ երկրաշարժէ. որով ուրիշ տեղերէն զատ Գանձակ մայրաքաղաքն ալ գրեթէ հիմնովին կործանեցաւ. բոլոր բնակչացը գերեզման ըլլալով, և անոր աւերակաց տակ մնացին վերոյիշեալ Գրիգոր Վարդապետն և իր աշակերտակիցն Սարգիս վարդապետ, որք այն կողմերուն ամենէն երեւելի վարդապետն համարէին յետ Դաւթի իրենց վարպետին. ձեռնադրութեան ժողովին մէջ Սարգիս ամենէն պատուաւոր անձն սեպուած էր՝ յետ ձեռնադրող Սահակ եպիսկոպոսի. իսկ Գրիգոր որ սովորաբար Գանձակեցի կ'անուանի՝ ծանօթ է լինելոցաւնոյ Բիբուսիտ գրովք, թէպէտ և այսպիսի մեկնութեան գիրք գտուին զանազան ոճով, զանազան հեղինակաց գործ, և չէ յայտ որն է իրեն յատուկ գործն:

յորում և բարձր աստիճանաց հասան. զոր և հա մառօտիւ իմն յիշէ Շնորհալին Վիպասանութեա նը մէջ.

« Ըզհամազգիս ըզկնի ձրգեալ
Ձարի եզբարս իւր քաջացեալ,
Ըստ Յետվայ զորապետեալ.
Որոյ Վահրամ վերաձայնեալ,
Միւսոյն Վասակ անուանադրեալ.
Որք վէհագոյն փառս ընկալեալ
Եւ մեծարգի պատուոյ հասեալ.
Ըզպատերազմ ազանց վանեալ,
Հակառակաց յալթող գրտեալ.
Վասն այսորիկ շքեզացեալ,
Եւ աշխարհի նոցունց տիրեալ »:

Վիպասանութեան վերջի տողերն մեծ և յիշատակաց արժանի դիպուած մը կ'ակնարկեն, զոր արժան է քիչ մը բացայայտել, արարագիր քրիստոնէայ հեղինակաց թողած աւանգութեամբք: Յետ մահուան Էպուլ-Մանսուր Ամէր խալիֆայի Ե. գիպոսի' իր յաջորդին Հաֆէա Աէֆնիլլահի իշխանութեան սկիզբը՝ (1130) շատ շփոթութիւն եղաւ տէրութեան և ժողովրդեան մէջ, պատճառաւ անխոհեմ և անհանգարտ բարուց և գործոց իր վէզիրին, որ իր որդին ըլլալով համարձակ և յանգուզն կը գործէր. ժողովուրդն և իշխանք ձանձրացած՝ և մէկմէկու վրայ կասկածելով, զի մեցին առ խոհեմ և ծերունազարգ իշխանն և զօրավարն Վահրամ, (զոր Պէհրամ Թահէտտուլլահ անուանեն), որ երկար տարիներ թէ տէրութեան ծառայեր էր հաւատարմութեմբ, և թէ իր կրօնից և ծիսից անփոփոխ պահպանութեամբ, որով թէ քրիստոնէից և թէ բնիկ սեղացեաց սիրելի և վրաստահանի եղած էր: Վահրամ իրեն պարք սեպեց այս պաշտօնս ալ. խալիֆային հաւատարիմ եղած զօրք և իր իսկ համազգի Հայ գնդով սկսաւ դիմել ի մայրաքաղաքն Քահիրէ. խռովարար վըզրուկն (Էլհաջէն) Վահրամայ օտնաձայնը ըսելուն՝ մէկէն թողուց փախաւ. Քահիրէ և Խալիֆային իբրև հրեշտակ խաղաղութեան ընդունեցան ըզՎահրամ. և խաղաղութիւնն ապահովելու համար՝ աղաչեցին և ստիպեցին զնոյն ինքն Վահրամ՝ Խալիֆային երկրորդ ըլլալ, այսինքն վզրուկ, և տէրութեան հազարապետ: Կամաւ կամ ակամայ յանձնառու եղաւ Վահրամ այս անակնկալ և գերագոյն պատուոյն (1134). և խոհեմութեամբ կառավարեց քանի մը տարի: Բայց հալածեալ վզրուկին կուսակիցք սկսան քիչ քիչ ձայն վերցնել և գանգատիլ, թէ Խալիֆային ձեռքէն իշխանութիւնն վերցուցեալ, և ամեն բան Հայոց անցաւ. օր մ'ալ միաբան ժողովելով իրենց հաւատոց գրքերը՝ Կուրանը՝ նիզակներնուն ծայրը կախած, ելան դիմեցին յարբուսիս կանչուողաւելով և ազմրկելով: Հայոց հեծեալքն և աղեղնաւորք՝ որք Խալիֆային և Վահրամայ պաշտպանք և հաստատութիւնն էին՝ ուղեցին ցրուել զանոնք. բայց Վահրամ արդիւնց. Չասոնք հալածել՝ շուտ գիւրին բան է, ըսաւ, բայց տեղւոյս տէրութիւնն և պաշտօնք՝ իրաւամբք մերը չեն, այլ այլազգեացս. հարկաւ օր մը նորէն իրենց ձեռքը պիտի անցնի,

և կըրնան այն ատեն սաստիկ վրէժինդրութիւն ընել. ըսաւ է որ հիմակուրնէ թողուիք իրենց, և մերնը առնելով երթանք: Հրամայեց Հայոց որ ուզածնին առնուն, և իրենց ինչերով և զէնքերով ելլեն քաջուն Սայխայ կողմը, ուր իր եղբայրն Վասակ կ'իջևէր, հին Թեբէի քովերը նստած. Խալիֆայն շատ տիրութեամբ թողուց զՎահրամ. մանաւանդ երբ ապստամբաց գլուխն Ռոտովան անարգել առաջ եկաւ, և իշխանութիւնը ձեռք ձգելը բաւական չսեպելով ուղեց Հայերը ջնջել: Զօրքերը շատցնելով վազեց Վասակայ վըրայ, քաղաքը պաշարեց. և վախնալով որ Վահրամ ետեւէն չհասնի՝ ծածուկ իմաց տուաւ ներսը եղող մահմետականաց և դաւով սպաննել տուաւ զՎասակ, ու տիրեց քաղաքին: Քիչ ատենէն հասաւ Վահրամ իրեններովը և ինքն ալ պաշարեց զՌոտովան. սակայն տեսնելով որ պաշարումն շատ երկար պիտի քէ, որովհետև քաղաքն շատ պաշար ունէր, ընդհակառակն իր բանակին պաշարը կարձ էր, մեծ որոշմունք մ'ըրաւ. ինքն իր վիճակն և բաղձն ընտրեց. զօրացը պատուէր տուաւ ցրուելու. ինքն սուրին տեղ խաչ, սաղաւարտին տեղ կնկուղ առնելով քաջուեցաւ Սայխայ վանքի մը մէջ, մնացեալ կեանքն ազօթքով և ճգնութեամբ կնքելու: Ռոտովան անկասկած մնալով, և վատութեամբ՝ Հայոց քաջ կոռուողներէն առնուլ չկրցած վրէժը՝ անոնց կրօնաւորներէն առնուլ ուղեց. դարձաւ նորէն յիշխանանիսան. որոյ մօտերը կար Հայոց վանքն Չահիր կամ Չահիրատ ըսուած տեղ մը, ուր նստէր և Անանիա արքեպիսկոպոս, յաջորդ Քրիզոստոսի, (եղբօր Վահրամայ և Վասակայ). թէ զսա և թէ զվանականք թրէ անցուց: Յետոյ քննելով և իմանալով Վահրամայ ուր ըլլալը՝ մարդ զրկեց որ զինքն ալ բռնեն. Վահրամ գէմ չկեցաւ. այլ իրեն կրօնաւորական ձեն և իր անկուռ սիրտն՝ կապեց եկողաց ձեռուրները, թուլացուց Ռոտովանի խտատարտութիւնն ալ. որ թող տուաւ անոր՝ ապրելու այս նորատեսակ խարաղնազգեաց սպառազինութեանը մէջ:

Սակայն անոր հին բարեկամն և երախտապարտ Խալիֆայն՝ շատ աղաչանք խաւրեց Վահրամայ՝ որ նորէն դառնայ գայ իր քով. Վահրամ շատ գէմ կեցաւ. սակայն յետոյ, կ'ըսեն, յանձն առաւ գալու՝ իր կրօնաւորական կերպարանօքը, և կարգօքը. և այնպէս ալ ապրեցաւ մինչև ի մահը արբուսի գլեկին մէջ. և երբ մեռաւ՝ մեծ հանդիսիւ և փառօք յուղարկաւորութիւն ըրին իրեն քրիստոնէայք և մահմետականք, և թաղեցին ի Չահիրատ ի Վանս Հայոց:

Այս գէպքս, Վահրամայ իշխանութիւնը թողուլ և կրօնաւորին եղաւ յամի 1137. յորմէ քիչ տարի վերջ գալով իր եղբորորդին Քրիզոստոս կաթողիկոս՝ այս կողմերս, հաւանական է որ դեռ կ'ապրէր Վահրամ. և այն ատեն աւելի ալ հաւանական կ'ըլլայ այս երկուքին տեսաւորութիւնը. երկու համարեանց, և մէկմէկ կերպով ծայրագոյն պատուաւոր Պահլաւունեաց. որոց մէկն իր քաղաքական և զինուորական ասպարէզը փառօք չափած՝ կենաց ընթացքն ալ կնքելու մօտ էր կրօնաւորական քօղով. միւսն՝ ի մանկութենէն այն սուրբ սքեմով մեծցած՝ իր երկար հայրապետութեան շրջանին կէսը հասեր էր. և գեռ նոր

Միտնի ժողովին մէջ՝ եկեղեցական փառաց բարձրագոյն կէտը երած կրնար ըսուիլ 1:

Չուզելով մեր նպատակէն շատ խոտորիլ, այլ և ոչ վերջիչեալ ազգային պատմութեան անսովոր դէպքը և հետևանքը անյիշատակ թողուլ, համառօտաբար աւելցնենք, որ Վահրամ ուրիշ ազգային յաջորդ մ'ալ ունեցաւ. որովհետև Ռոստովան էից դէմ, որ բազմաթիւ էին այն ատեն յՄզիպտոս, Հայք, Ափաիք և Ասորիք, և այլն, ատելի եղաւ անոնց. և հազիւ փախելով ձեռքերէն՝ ապուհնեցաւ առ Թալիֆայն: Սա իշխանութիւնը վերցնելով անկէ՝ կեանքը շնորհեց. այլ երբ նորէն խլրտիլ սկսաւ՝ սպանուեցաւ: Իսկ Թալիֆայն ալ թոյլ և անզգոյշ մարդ մ'ըլլալով՝ իր անխոհեմութեան զոհ եղաւ, սպանուելով իր նոր վզուկէն՝ որ կոչուէր Ապպաս: Սա՝ սպանութեան յանցանքը ուրիշի վրայ ձգելով և ուրիշ անմեղներ ալ սպաննելով՝ Թալիֆայնի գեւաբոյս որդին յաջորդեցուց, և ինքն իր Նսար որդւով՝ ուղարձին պէս կը կառավարէր: Ահա այն ատեն Հայ զորավար մ'ալ զոր Գալայի կամ Գալաս Իպն-Ալաւա-Էլ-մէլիք Խասալի հոչէն պատմիչք, եկաւ զորք այս բանաւորաց վրայ (1154), որք շուտով փախան դացին Ասորուց երկիրը. այլ չկարցան սարիւլ 'ի վրէժինդրութենէ. երկուքն ալ մէկմէկ կերպով սպանուեցան: Գալայի եղաւ վզուկ և հազարապետ Յգիպտոսի, միանգամայն և աներ Թալիֆայն. և բաւական ատեն խոհեմութեամբ կառավարեց, հաւասար հոգալով զքրիստոնէայս և ըզմասմեաականս, ինչուան վերջին Ֆաթիմեան Թալիֆայնի ատեն, որ էր Ատհէա Լէտինիլաս (1160-1173): Ասոր հորքոյրն նախանձելով կամ սխութեամբ թոյն տուաւ՝ հայ վզուկին. որ չմեռած՝ վրէժն առաւ և սպաննեց զքեղատուն. զոր ինքնին Թալիֆայն իրեն մտաներ էր (1161): Գալայեայ յաջորդեց իր որդին Չառիկ (գուցէ Չարիհ), այլ ուրիշ բանաւորէ մը զրկուեցաւ. որուն ալ յաջորդեց հռչակաւորն Եուսուֆ Ալաֆէտաին, որ և սիրացաւ բովանդակ Յգիպտոսի և Ասորուց:

Այս վերջին երկու Հայ վզուկաց հաւատով ալ հայ, այսինքն քրիստոնէայ ըլլան, ստոյգ չէ մե-

1 Արարադի պատմիչք կ'ըսեն թէ Վահրամայ այցելութեան եկողն էր իր եղբայրն Գրիգոր, և թէ երկրորդ անգամ ալ եկաւ և հոն վախճանեցաւ յամի 1116: Գայտ է որ շփոթեն զթուականն և զդէպս. նախ կամ թողնուած կամ պատրիարք կոչելով զնա, թէ և այս կերպով մը ստոյգ է, ըստ մեր նախ պատմածին (55), այլ 1116ի վախճանելն անտեղի է. վասն զի արդէն իր յաջորդն՝ Անանիա ալ սպանուած էր այն ատեն: Հաւանական և անտարակոյս է որ Գրիգոր արքեպիսկոպոս երբեմն երբեմն կու գար իր մեծապատիւ և մեծազօր եղբայրը տեսնելու, որուն մտա ալ կը բնակէր, և անոր քով ալ մեռած ըլլայ: — Գրիգոր ցանկալի անուամբ՝ ժամանակակից եպիսկոպոսաց յաճախութիւնն՝ կը շփոթէ կամ տարակուսելի կ'ընէ զպատմութիւնը. տարակուսի և քննութեան առիթ մ'ալ կ'աւելցնեն նոյն արարագիր հեղինակք, նոր Գրիգոր եպիսկոպոս մ'ալ մէջ բերելով, զոր չեն յիշեր պատմիչք մեր. և էր կ'ըսեն քեռորդի Գրիգորիսի և Երեսիսի. զոր թէ և իրեն պէս շատ երիտասարդ էր՝ Գրիգորիս իր կամ թողնուութեան սկիզբը նուիրակ խարեց 'ի Կ. Պօլիս, յԵրուսաղէմ և յԱղեքսանդրիա, շատ բնծանրով. յԱղեքսանդրիա Գաղղղկաց հետ ժողովքի մտած և հաւանած է, կ'ըսեն, և հոն էր յամի 1117, երբ ներկայ գտուեցաւ անոնց մեծ եպիսկոպոսի մը յուղարկաւորութեան: Ենորհայն իր քրոջ (Մարամայ) Վահրամանուամբ որդի մը կը յիշէ, որ 'ի կէս թի՛ք գարու վախճանած էր, բայց ուրիշ գաւակներ կ'ըսեն նոյնպէս կ'իմացնէ. մեր գիտցածն այսչափ է:

զի. իսկ անոնց այսպիսի բարձր իշխանութեան հասնելուն պատճառն յայտ է, որ մէկ մը Թալիֆայից սկարութին էր, մէկ մ'ալ մերայնոց ճարտարութիւնն. և եթէ ասոնք ուրիշ նախանձորդներ չունենային՝ գուցէ աւելի ալ դիմանար Ֆաթեմեանց ցեղն յիշխանութեան 1:

Այս ետքինս է անշուշտ կամ իր մէկ մերձաւոր ընկերն, այն ուրացեալ Հայ սպարապետն Յգիպտոսի, զոր Թաշակրաց պատմիչք Էլ-մէլիք Էլ-Աֆրալ կամ Եֆրէն, կը կոչեն, (գուցէ Էլ-Երմանի). որ յետ Թաշակրաց Երուսաղէմին սիրելու, բազմութեամբ 200,000 զօրաց՝ վազեց անոնց դէմ յԱսկաղոն, բայց մեծ կոտորածով հալածուեցաւ և դարձաւ յՅգիպտոս: Թաշակրաց գործոյն առաջին հռչակաւոր երգիչ և մեծ Բանաստեղծն Խաւալացոյց՝ Գասոյ, այս դէպքս քիչ մը այլայլելով, անմիջապէս անոնց Երուսաղէմի մտնելուն ատեն՝ վրայ հասած կ'ըսէ Հայ սպարապետը, որ հաւատքին հետ՝ Ալեմենդ (Աղեմէս) անունն ալ փոխեր էր յԷմիրեն, (Թէ, ըմ):

Guida un Armen la squadra, il qual...
Fù già Clemente, ora Emiren s' appella.
և կը գովէ մեծ հանձարը և քաջութիւնը.
È duce insieme e cavalier soprano
Per cor, per senno e per valor di mano.

և ամենէն մեծ և յետին ախոյեան զնա կը գնէ Թաշակրաց: Միայն բանաստեղծական հնարք է ըսելն, թէ յետ բանակին ջարդուելուն յարձընեցաւ Թաշակրաց Գիւցաղին՝ Աոփրեատոսի վրայ, վերաւորեց անոր ձախ ձեւքը, այլ ինքն ալ անոր աջէն զարնուած մեռաւ: Իրաւ է որ այն պատերազմով կը լմընայ Երգողին ալ Երգելոյն ալ մեծ գործն. Աոփրեատոս երկրորդ անգամ յաղթանակաւ կը մանէ յԵրուսաղէմ, և

Չեւ մերկացեալ զարիւնազանդ վերարկուն՝
Գայ 'ի սառնարն, այլովքն հանգերձ, Պէա զօրուն.
Կախէ անդէն ըզգէնս, և զուխան հոգեւանդ՝
Համբուրելով զմեծ Գերեզմանն՝ կընքէ անդ:

1 Չարմանալի հանդիպութիւն մ'է այս աշխարհքին (Յգիպտոսի) մահաւանական Խալիֆայից կամ իշխողաց՝ Հայազգի պաշտօնեայ և պաշտպաններ ունենան. ինչպէս մեր դարուս և մեր օրերս ճանթ եղան և են Հայազգի ճարտար առաջին Պաշտօնեայք տեղւոյն, այս պատմութեանս միջոց ալ աւելի մեծ իշխանութեամբ՝ քանի մը Հայ Ազգուկք եղած են, և ամբողջ Հայ զօրագունդ մը, որ նստէր 'ի Գահիրէ 'ի թաղն Հիւսէյնիէ: Դաւ և յառաջ քան զՎահրամ և զՎասակ 1080—1094ի միջոց կար Հայ Ազգուկ մը Պեֆր—Էլ—Ճէֆալ անուամբ, մեծ իշխանութեամբ և զօրութեամբ, ճեր և տկար Խալիֆայի մ'ատեն, ուսկից ապստամբեցաւ իր որդին և քաշուեցաւ յԱղեքսանդրիա. այլ հայրն պաշարեց առաւ զքաղաքը և զորդին բանորը գրաւ, ուր և մեռաւ նա: Վփոտեաց և Ասորուց եկեղեցիներէն մէկ քանին՝ Հայոց տուաւ, թէ և իր ազգակիցներն ալ օսատիկ կ'աշխատեցնէր: Ասոր հրամանաւ Աղեքսանդրիոյ պատրիարքն (Արիւնդ) ժողով մը գումարաց յամի 1086, իր ազգին վէճերը զազրեցնելու համար. այս ժողովին ներկայ եղաւ և Գրիգոր արքեպիսկոպոս մեր՝ քեռորդի Ալաշարկին շափր սահմանեց: Պէտեաց մէջ եղած հակառակութիւնը զազրեցուցին: Երջն տարին Հայ Ազգուկն պատուիրեց քրիստոնէից սեւ գօտի կապել և իրենց զլիազարկին շափր սահմանեց: Պէտեալ—Ճէմալը յաջորդեց իր որդին Շահնուհ որ և Էլպէլ—Խասեմ, և նոյնպէս տիրաբար վարէր, և փոխանակ անդրանկան Խալիֆային՝ ուրիշ մէկ որդին իշխանացուց: Բայց այս Հայ Ազգուկքս կրօնքին փոխեր էին:

Այս տողերով կհրէ սիրաբաղդ բանաստեղծն իր վիպասանութիւնը: Իսկ պատմութիւնն կ'աւանդէ հաւատափոխ Հայ սպարապետին համար, որ կոտորածէն ապրելով յԱսկաղոն, երբ տեսաւ անոր աշտարակներէն իր բանակին բեկորները և քրիստնէից յաղթական գրօշները՝ լալով կանչած ըլլայ. « Այսպէս ուրեմն մեծ է եղեր Խաչեցեւոյն « զօրութիւնն՝ քան զՄահմէտին »: Արաբացի պատմիչ մ'ալ կ'աւելցընէ, թէ մահմետական բանաստեղծ մը հիանալով այս բանին վրայ, գրեց այս տողերս քերդոլաբարառ Ռայմինա Սէն-ժիլ (Սնճիլ՝ մեր Պատմաց), զոր համարէր գլխաւոր յաղթող. « Մեսիայի սրովը յաղթեցիր, ո՛վ աննը. « ման Սէն-ժիլ աշխարհք Աֆաալայ կոտորուա. « ծին նմանը տեսած չէր »: Աֆաալ իմանալով զայս՝ սպաննել կու տայ քերդողը: Իսկ ինքն պատերազմին դաշտը և քաղաքը թողլով մնացորդ փախտականօք կը մտնէ ի նաւ և կը դառնայ յԱ. դիպտոս:

Կը շարունակուի:

ԼՃԱԿԻՍ ՁԿՆՈՐՍԸ

ԵՐԵՎԱՆԻ ԺԱՄՈՒՑ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՔ

(Տես էրես 299):

Է.

ԵՐԵՎԱՆԻ ԴԵՄ:

Արեգը մարը մտնելու մօտ էր, երբ ըստ սովորութեանս, պարտէզիս սրմին վրայ կոթնած, արեւմտից տեսարանը կը դիտէի: Էրկնից կամարը հետզհետէ արեւուն բոցա վառ ճառագայթներով ներկուելու հետ էր: Լճակին ջուրն ալ հետզհետէ կ'աճէր, այն ցամքած դաշտերը միւսանգամ ծածկելով: Ողորկ ու յստակ մակերևոյթ մը կը ձևանար, որու վրայէն արեւու ճառագայթք ինչպէս հայելիի մը երեսէն կ'անդրադառնային: Աշխատաւորաց նաւակք մարդիկներով լի չրջակայ կղզիներէն քաղաքը կը դառնային, զուարթութեան եղանակներով օդը լեցնելով, և մշակութեան բերքերով բեռնաւորած նաւակք, կղզեկաց բարեբերութեան արդիւնքները քաղաքին վաճառանոցները կը փոխադրէին:

Աչքերս դարձնելով յանկարծ ձերուկ Դօնին ալ տեսնեմ, որ գործն աւարտած՝ նաւակը կը դառնար: Խեղճը շատ աշխատութենէն յոգնած կ'երևնար. ծանր ծանր քալելով ելաւ նաւակը մտաւ, գործինը ըր ըլուաց տեղերնին դրաւ, ու յետոյ թին

ձեռքն առնելով եկաւ կեցած որմիս տակը ցիցը տնկեց ու նաւակն անոր կապեց:

— Բաղդս օգնեց ինձի այս անգամ, ըսաւ զուարթերես, և յոյս ունիմ որ այս գիշերուան աշխատութեամբս, վաղը կարենամ ձկնորսութեանս արդիւնքը քաղաքը տանիլ:

— Շատ ուրախ եմ, Դօնի, ըսի իրեն. կը տեսնես ուրեմն որ Աստուած ոչ ոք ձեռքէ կը թողու. մանաւանդ զանոնք որ իրենց չքաւորութեանը համբերութեամբ կը տանին:

— Այո, ըսաւ. ես ալ փորձով տեսեր եմ որ աւելի համբերութեամբ տարած օրս օգներ է ինձի Աստուած: Հիմա աշխատութենէս ետքը կը զգամ որ հանգստեան պէտք ունիմ, ու պէտք է շուտով իմ սեղանս պատրաստեմ:

Աս ըսելով տախտակեայ մոխրատար ընդունարանը նաւակին մէջ տեղը քաշեց, մոխիրը եզերքները ժողովելով մէջտեղը փոսացուց, խոհեաններէն պզտի մաս մը առնելով վրան դրաւ, բոցը մօտեցուց, բռնկցուց ու շուտ մը ծուխը վեր բարձրացաւ: Յետոյ նաւակին կողերուն վրայ հանգչեցուցած ձողի մը վրայէն ջրով լեցուն պտուկը բոցին վրայ կախեց, ու ջուրը եռացնելէն ետեւ մարացորենի ալիւրն առաւ, երեք մեծ բուռ մէջը լեցուց, և ապա երկայն բարակ տախտակով մը խառնելով ու եռացընելով, վերջապէս պտուկը կրակէն վար առաւ, մակարդակ տախտակի մը վրայ չրջեց, և ապա նոյն պտուկը վեր առնելով կիսաբոլոր թանձր կոյտ մը մնաց տախտակին վրան, թանձր գոլորչի մը օդու մէջ սփռելով:

Ահա այն մարացորենի թանձր խիւսը կամ դեղնորակ խմորը, աղքատ ձկնորսին հացիկը և շատ անգամ ալ մէկ հատիկ խորտիկն է:

Այնպէս հացիկը պատրաստելէն ետեւ, մնացած կայծականց վրայ ձկնորսութեան յոռեգոյն մասը ընտրելով դրաւ խորովեց, և ապա կայծականց խոշոր կտորները մարելով մէկգի դրաւ երկրորդ օրուան ծառայեցնելու. մնացածները մոխրով ծածկեց, և հուսկ ուրեմն քրտինքը սրբելով նստաւ բնութեան կարօտը յագեցնելու:

Զուարթութեան ու նախանձու աչքով կը նայէի այն բնութեան մարդուն՝ որ ճոխից մեծահաց սեղաններուն անկարօտ այնպիսի ժուժկալ կերակրով կը գոհանար: Եւ ինչպիսի՜ ախորժանօք կը ճաշակէր այն մանր ձկներն ու դեղնորակ հացիկը: Ստոյգ որ մեծաց սեղանակիցք ոչ այնքան քաղցրութեամբ կը վայելն իրենց առջին դը-